կարօտ են մանաւանդ մաթեմատիքական և բնագիտական ռէալ վարժարանները։

7)։— Ոչ մէկ մասնաւոր ուսումնարան իրաւունք չունի ընդհանուր մարդկային կրթութիւնը անտես թողնելու, եթէ որ նա չի ցանկար ստրուկ դառնալ դատարկ ու սին շահասիրութեան։

8)։— Իւրաքանչիւր վարժարանի ներքին օրգանիզասիօնը այնպէս պէտք է յարդարել, որ վարժապետաց ընկերութիւնը—ԿՈՒԼԻԿՈՒՄ—բարոյական մի խումբ կազմէ ու իր վրայ պատկերացնէ այն կեանքը, առ որ աշակերտները ժամանակով ինքեանք բարձրանալու են։

Պ. Լանդէի ճառի աղագաւ ծագած վէճերու աւարտելէն յետոյ՝ Պ. Մայր վարժապետը Վիէննայէն գեղեցիկ խօսքերով կ'առաջարկէ հանդիսականներուն՝ որ ընդհանուր մանկավարժական ժողովի 19-դ նիստը միւս տարի՝ այսինքն՝ 70 թ. Վիէննայի մէջ կատարուի, և նորա հրաւէրը ամբողջ ժողովի կողմէն գրեթէ միաբերան կընդունուի։ Պ. Նախագահը հեռագրով կը յայտնէ ժողովի կամքը Վիէննայի Քաղաքապետին ու Մարդիստրատին, և նոյն իսկ օրը հրաւիրական պատասխան կընդունի ի նոցանէ։

Թէև ժողովի պատկերը աւելի լրացնելու համար հարկ էր կրրորդ օրուայ մասին նա և վարժապետուհեաց ու ընագիտաց մասնաւոր նիստերու վրայ տեղեկութիւն տալ, բայց ես կը վերջացնեմ այս տեղ իմ հաշիւս. որովհետև եթէ բոլոր ճառերը թարգմանելու՝ և կամ նոցա բովանդակութիւնը գէթ համառօտիւ պատմել ուզենայի, օ՛չ թէ լրագրական յօդուած, այլ ամբողջ մի գիրք պէտք կըլլիներ յօրինել։ Ընդհանուր Մանկավարժական ժողովը շուտով Վիէննայ դումարուելու է. հոգւով չափ ուրախ կըլլինիմ, եթէ արժանանամ դարձեալ ներկայ գտնուիլ ի նմին, և զալոց անգամ աւելի կատարեալ հաշիւ տալ յարգոյ ընթերցողիս։

Փ. Վարդանեան։

ի Լայպցիգ։

ԲԱՐՈՅԱԿԱՆ

ՕՐՕՐԴ ՄՕՐՆ ՈՐԴԻՆՈՒՐԻ

Օրօր ասեմ կենացս արև դառնուկիս,
Օրօր ասեմ նորածաղիկ զաւակիս.
Օրօրելով նաննիկ ասեմ մեղմագին,
Որ քաղցր քուն գայ քո սիրուն աչերին.
Օրօր դու իմ վարդակարմիր ու աղուակ,
Լայնաճակատ քաջասերունդ Հայ զաւակ.
Անոյշ քնով օրօրոցիդ քուն եղի՛ր,
Անոյշ սիրով Հայ ազգութեան զօրացի՛ր։

Օրօր ասեմ կենացս արև դառնուկիս,
Օրօր ասեմ նորածաղիկ զաւակիս.
Գիշեր ցորեկ թող անդադար և անքուն,
Ծիծ տամ քեզի՝ ամեղ զաւակ կաթնասուն,
Ծծիս հետ այլ Հայ ազգութեան և կրօնի,
Սնունդը տամ, որով լինիս դու արի.
Անոյշ յուսով արիութեան քուն եղի՛ր,
Անոյշ սիրով Հայ կրօնի զօրացի՛ր։

Օրօր ասեմ կենացս արև դառնուկիս,
Օրօր ասեմ նորածաղիկ զաւակիս.
Առիւծ Հայերն անյաղթ քաջերն աղգասէր,
Իրենց տղոց կաթ կը՛ամբեն աղգի սեր.
Դու այլ արդէն կաթով սորվի սիրելու
Կեանքէդ աւել ազգդ ու կրօնդ պահելու.
Անոյշ յուսով սուրբ կրօնիդ քուն եղի՛ր,
Անոյշ սիրով Հայ ազգութեան զօրացի՛ր։

Օրօր ասեմ կենացս արև դառնուկիս,
Օրօր ասեմ նորածաղիկ զաւակիս.
Զքնաղ դառնուկ՝ Հայրենեացդ փառքն անցել է,
Հայաստանի վայել չութիւնն կորել է.
Աղնիւ եղբարքդ երկրէ երկիր ցրուած են,
Շատի սրտեր միմիանցից թուլցած են.
Անոյշ յուսով Հայ եղբարցդ քուն եղի՛ր,
Անոյշ սիրով Հայ ազգութեան զօրացի՛ր։

Օրօր ասեմ կենացս արև գառնուկիս,
Օրօր ասեմ նորածաղիկ զաւակիս.
Դու քո սուրբ Հարց աւանդը պինդ պահպանէ,
Նոցա դրած կարգն ու կանոն ողջ սուրբ է.
Թէև եղբարցդ շատերն 'ի մէնջ զատուեցան,
Դարձեալ նորա 'ի միութիւն կիսուեան.
Անոյշ յուսով սուրբ միութեան քուն եղի՛ր,
Անոյշ սիրով Հայ ազգութեան զօրացի՛ր.

Օրօր ասեմ կենացս արև գառնուկիս,
Օրօր ասեմ նորածաղիկ զաւակիս.
Ոյժը հատաւ, մէջքը բեկաւ ազգութեան,
Երբ խզեցաւ քաղցր կապը միութեան.
Հայ տղին պլ՝ այս դարուս մէջ ամօթ է,
Որ նոյն կապը նոր կապելու չաշխատէ.
Անոյշ յուսով սուրբ միութեան քուն եղի՛ր,
Անոյշ սիրով Հայ ազգութեան զօրացի՛ր.

Օրօր ասեմ կենացս արև գառնուկիս,
Օրօր ասեմ նորածաղիկ զաւակիս.
Սիրոյ ուժով և միութեան կապովը,
Տկար գառին՝ յաղթեց հրզօր Առիւծը.
Եօթնապլիսեան վիշապունոյն մեծաղօր,
Միութեան խումբն անահ արեց բիւր կտոր.
Անոյշ յուսով սուրբ միութեան քուն եղի՛ր,
Անոյշ սիրով Հայ ազգութեան զօրացի՛ր.

Օրօր ասեմ կենացս արև գառնուկիս,
Օրօր ասեմ նորածաղիկ զաւակիս.
Հայոց ազգի պայծառութեան և փառաց,
Լեր իմ զաւակ յառաջաբաղ անձնուրաց.
Սուտ է, չկայ աշխարհիս մէջ ուրիշ սէր,
Քան ազգութեան սէրէն լինի գեր 'ի վեր.
Անոյշ յուսով երջանկութեան քուն եղի՛ր,
Անոյշ սիրով Հայ ազգութեան քաջացի՛ր.

Օրօր ասեմ կենացս արև գառնուկիս,
Օրօր ասեմ նորածաղիկ զաւակիս.
Թոյն և խայթոց քեզ լինին հոգոս և իմ կաթ,
Քո հայրենիքը թէ չսիրես սրտակաթ.
Երթաս փնտռես մեր կորցրած ուսումը . . . .
Փնտռողաց հետ թափես և քո քրտինքը . . .
Անոյշ յուսով երջանկութեան քուն եղի՛ր,
Անոյշ սիրով Հայ ազգութեան քաջացի՛ր.

Օրօր ասեմ կենացս արև գառնուկիս,
Օրօր ասեմ նորածաղիկ զաւակիս.
Աղուակ աչերդ բանալդդ պէս նախ նայես,
Քո տխուր մայր Հայաստանի զիրդ երես.
Նոյնպէս լեզուդ բանալդդ պէս նախ յօգես,
'Իմ Հայրենիք, հա՛ կսիրեմ քեզ՝ և ես".
Անոյշ յուսով Հայաստանի քուն եղի՛ր,
Անոյշ սիրով Հայրենեացդ քաջացի՛ր.

Օրօր ասեմ կենացս արև գառնուկիս,
Օրօր ասեմ նորածաղիկ զաւակիս.
Երբոր բացուին քո ոտքերը դեռաղօր,
Վազես դիրկը՞մեր Հայաստան տխուր մօր.
Նա է քո մայր՝ նորա փառաց աշխատի՛ր,
Նորա համար եղբարցդ հետ զոհ եղի՛ր . . .
Անոյշ յուսով Հայաստանի քուն եղի՛ր.
Անոյշ սիրով եղբարցդ հետ քաջացի՛ր.

Օրօր ասեմ կենացս արև գառնուկիս,
Օրօր ասեմ նորածաղիկ զաւակիս.
Ես պլ յայնժամ պարծիմ ուրախ կանանց մէջ,
Թէ ուսման սէր, Հարց կրակին հետ անշէջ,
Իմ զաւակիս սրտի մէջ պլ կ'վառուի,
Քի ունի նա իսկ ազգասէր քաջ հոգի.
Անոյշ յուսով երջանկութեան քուն եղի՛ր,
Անոյշ սիրով Հայ ազգութեան քաջացի՛ր.

ՕրօրՀասեմ կենացս արև գառնուկիս,
Օրօր ասեմ նորածաղիկ զաւակիս.
Իմ տղաս ես վերջին ճգամբ կաշխատի,
Պաշտպան լինել իւր կրօնին Հայրենի.
Հայաստանի վայելչութեան և փառաց,
Վառուած սիրով նա ես է զոհ եղած.
Անոյշ յուսով երջանկութեան քուն եղի՛ր,
Անոյշ սիրով Հայ ազգութեան քաջացի՛ր.

Օրօր ասեմ կենացս արև գառնուկիս,
Օրօր ասեմ նորածաղիկ զաւակիս.
Հապա զաւակ չքնաղ գառնուկ քուն եղի՛ր,
Հայրենեացդ անոյշ սիրով զօրացի՛ր,
Աստուածածին լինի քեզ միշտ պահապան,
Եւ Յիսուսի խաչը լինի քեզ պաշտպան.
Անոյշ յուսով երջանկութեան քուն եղի՛ր,
Անոյշ սիրով Հայ ազգութեան քաջացի՛ր.

Օրօր ասեմ կենացս արև գառնուկիս,
Օրօր ասեմ նորածաղիկ զաւակիս.
Օրօր ասեմ՝ որ քունդ ևս քաղցրանայ,
Աղնիւ անձդ՝ աղնուապար զարդանայ,
Քնիր տղաս, ժամ պիտի գայ որ զարթնիս.
Զարթնի և քո հայրենիքդ 'ի բարիս,
Անոյշ յուսով երջանկութեան քուն եղիր,
Անոյշ սիրով Հայ ազգութեան զօրացիր։

Գրիգոր Բրբուքեան Մոդինեանէն։

ԱԶԳԱՑԻՆ

ՆՈՒԻՐՆԵՐ

Օ՞ւրնչ այլ ինչ այնքան նուիրական էին մեր նախնեաց, եթէ ոչ մեր Քրիստոնէական Ս. Հաւատք և Եկեղեցիք։ Եւ զի՞նչ նոքա իւրեանց հեղեղանման արեանց հոսմանց փոխարէն փառք և յիշատակք թողուցին մեզ, եթէ ոչ դարձեալ մեր Ս. Հաւատք և Եկեղեցիք։

Պա՞ն նաև բաց 'ի մեր Ազգային մի քանի յատկութեանց՝ այլ ևս նուիրական կոթողք փառաց և սխրագործութեանց անցեալ ժամանակաց և նախնեաց՝ անմահ և պաշտելի բարերարացն ասեմ Հայաստանի, որք այժմ ակնարև լինին և մխիթարեն զմեզ.—ո՞հ, չի՞ք կամ չեն այլ ևս։

Արդարև մեր մնացեալ պարծանքները՝ քանի՞ թանկագնի յանձնուած են մեզ 'ի նախնեացս, քանի՞ հարուած, քանի՞ տառապանք և վիշտք կրելով, քանի՞ սով և սրածութիւնք ընդունելով՝ վերջապէս ընդ հուր և ընդ ջուր խոյացեալ՝ մեր սիրելի Հայրենեաց սրտաշարժ՝ աղեխարշ և երկնային զթութեանց արժանի աւերակաց մէջ հաղիւ մեր դարաւոր՝ այլ շինջեալ պերճութեանց նշխարներէն և նուիրական փառքերէն կը տեսնեմք՝ միմիայն մեր Ս. Հաւատքը և Եկեղեցիքը։

Հայք ամենայն արկածից և տագնապներու մէջ թէև ակամայ զիջած են տանիլ բազում զրկանաց և կորուստներուն, բայց չ՝ուսան նոքա, չ՝կարացին և չեն երբէք զիջանելու ներել իւր Ս. Հաւատքին և Եկեղեցեաց դէմ մաքառող մոլորեցուցչաց և չարամիտ յարձակողաց վերայ, որոյ վասն իւրեանց կեանքերը զոհած են և կը զոհեն միշտ անխնայ. որպիսեօք և եթէ յաջողած են և կը յաջողին պահպանել զնոսա. որք այսօր մեր առաջին փառքն և մխիթարութիւնք կը հանդիսանան։

Սակայն ցաւ 'ի սիրտ պէտք է խոստովանիլ, զի այժմ մեք՝ միայն մեր նախնեաց քաջագործութեանց և արդեանց վերայ պարծենալով կը բաւականանամք. հետեւաբար մեք ևս ազգովին չենք ջանար 'ի սրտէ գէ՛թ նոցա հաստատութեան և ներքին պայծառութեան։

Մասնաւորապէս խօսելով՝ այսօր մեր ազգի մնացեալ փառաց մէջ նախապատիւն է Մայր Աթոռս Հայաստանեայց Կաթողիկէ Ս. Էջմիածին՝ որպէս նուիրական և գահանիստ տեղի Կաթողիկոսաց Ազգիս, և սորա վերայ ամեն Հայ բաւական պարծանք և սփոփանք կը տածէ իւր եռանդեան և զղացմանց մէջ։ Բայց քանի՞ անձինք արդեօք կ՝երևին, որք անձկակարօտ տենչանօք և ճշմարիտ և հարազատ սիրով հետամուտ եղած լինին Ս. Էջմիածնի ներքին և արտաքին զրութեան և